ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/43

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Էդուարդ-Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 14.02.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2022թ. թիվ 26/26-1/1710-2022 գրությամբ «Էդուարդ-շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.01.2022թ. թիվ 02/16.4/575-2022 գրության հիման վրա, 01.02.2022թ. թիվ 26/26-1/1710-2022 գրությամբ նախաձեռնել է «Էդուարդ-շին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էդուարդ-շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էդուարդ-շին» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«*Գործի նախապատմությունը և փաստերը*

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Երևան քաղաքի «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց»ՊՈԱԿ-ի շենքի (Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցներ) կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էդուարդ-շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության (կցվում է).

Մասնակցի կողմից չի ներկայացվել ծավալաթերթը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության.

1.1 կետի համաձայն՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցվել է մասնակիցներին՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատաս-խանությունները: «Էդուարդ-շին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են ոչ ամբողջությամբ, մասնավորապես՝ Հավելված N 1.2-ի մասով՝ 18-րդ տողով ջեռուցման կաթսայի փոխարեն ներկայացվել է տեսախցիկի արտադրող, մոդել և տեխնիկական բնութագիր, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին, 2-4-րդ տողերով ներկայացված մոդելների տեխնիկական բնութագրով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, 5-րդ 19-20-րդ տողով մոդելները նշված չեն, 17-րդ տողով ներկայացված չեն արտադրողը, մոդելը և տեխնիկական բնութագիրը:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության

քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքաի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Երևան քաղաքի «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց»ՊՈԱԿ-ի շենքի (Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցներ) կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էդուարդ-շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «Էդուարդ-շին» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ծավալաթերթը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության (կցվում է).

1.1 կետի համաձայն՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցվել է մասնակիցներին՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: «Էդուարդ-շին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են ոչ ամբողջությամբ, մասնավորապես՝ Հավելված N 1.2-ի մասով՝ 18-րդ տողով ջեռուցման կաթսայի փոխարեն ներկայացվել է տեսախցիկի արտադրող, մոդել և տեխնիկական բնութագիր, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին, 2-4-րդ տողերով ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, 5-րդ, 19-20-րդ տողով մոդելները նշված չեն, 17-րդ տողով ներկայացված չեն արտադրողը, մոդելը և տեխնիկական բնութագիրը:

ա) Հավելված 1.2-ի 5-րդ, 19-20-րդ տողերով մոդելները չնշելու մասով

Ընթացակարգի հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը շինարարական աշխատանքների գնման դեպքում հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված

տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Ընթացակարգի հրավերի Մաս 2-ի 2.1.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները՝ համաձայն հավելված N 1.2-ի:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1.2-ի 8-րդ սյունակում նշված է, որ սարքավորման մոդելը նշվում է առկայության դեպքում:

Ինչպես արդեն նշել ենք, «Էդուարդ-շին» ՍՊԸ-ի կողմից հայտը մերժելու հիմքերից մեկը նշվել է այն հանգամանքը, որ Հավելված 1.2-ի 5-րդ, 19-20-րդ տողերով մոդելները նշված չեն:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ըստ Ընթացակարգի հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի, հրավերի Մաս 2-ի 2.1.1 կետի և հրավերի Հավելված 1.2-ի 8-րդ սյունակի՝ սարքավորման մոդելը նշվում է առկայության դեպքում:

Տվյալ պարագայում «Էդուարդ-շին» ՍՊԸ-ի կողմից 5-րդ, 19-20-րդ տողերով ներկայացված սարքավորման համար չի նշել տվյալ սարքավորման մոդելը՝ դրա բացակայությամբ /առկա չլինելու/ պայմանավորված:

Նման պարագայում գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտը մերժելիս այն հիմքով, որ Հավելված 1.2-ի 5-րդ, 19-20-րդ տողերով նախատեսված արտադրանքի համար մոդելները նշված չեն, գործել է ոչ իրավաչափ և վերոհիշյալ որոշումը հակասում է Ընթացակարգի հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի, հրավերի Մաս 2-ի 2.1.1 կետի և հրավերի Հավելված 1.2-ի 8-րդ սյունակի պահանջներին:

Արդյունքում խախտվել է նաև Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի համաձայն բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, ինչը տվյալ դեպքում առկա է եղել:

Նման պարագայում գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ ոչ իրավաչափ որոշման արդյունքում առաջացել է բացասական հետևանք, քանի որ «Էդուարդ-շին» ՍՊԸ-ն

կանգնել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև, քանի որ եթե հանձնաժողովը գործեր իրավաչափ, ապա վերոհիշյալ իրավիճակը վրա չէր հասնի:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հակառակ դեպքում Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Նման պարագայում, քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իմպերատիվ (պարտադիր) պահանջը (հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունը), ուստի գտնում ենք, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Էդուարդ-շին» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

բ) Արձանագրված մյուս անհամապատասխանությունների մասով

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ 2-4-րդ տողերով ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրով չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ՍՊԸ-ի կողմից ներկայացրած Հավելված 1.2 2-4 տողերում նշված սարքավորումների համար նշվել են Ընթացակարգի հրավերով պահանջված նույնական պարամետրեր՝

2-րդ տող՝ Օդի արտածման կանալային օդամուղ L=1600մ3/ժամ P=200ՊԱ:

3-րդ տող՝ Օդի արտածման կանալային օդամուղ L=500մ3/ժամ P=200ՊԱ

4-րդ տող՝ Օդի արտածման կանալային օդամուղ L=800մ3/ժամ P=200ՊԱ:

Նման պարագայում, գտնում ենք, որ հիմնավոր չէ գնահատող հանձնաժողովի պնդումը առ այն, որ 2-4-րդ տողերով ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ «Էդուարդ-շին» ՍՊԸ-ն պարտավորվել է տեղադրել Ընթացակարգի հրավերի պահանջներին լիավին համապատասխանող սարքավորումներ, իսկ հանձնաժողովի ինչ-որ եզրակացություն՝ արված մոդելների հետ կապված, հիմնավոր չէ, քանի որ վերջին հաշվով եթե անգամ մոդելների վերաբերյալ ինտերնետ կայքերում առկա են ինչ-որ տեղեկություններ, ապա պետք է փաստել, որ ատադրողները հաճախ սարքավորումներ են արտադրում պատվիրատուի կողմից հանձնարարված կոնկրետ պարամետրերով: Այլ կերպ ասած, եթե «Էդուարդ-շին» ՍՊԸ-ն լրացված Հավելված 1.2-ով պարտավորվել էր տեղադրել հրավերի պահանջներին համապատասխանող սարքավորումներ, ապա դրանց անհամապատասխանությունը կարելի էր փաստել բացառապես սարքավորումը մատակարարելու և տեղադրելու փուլում, երբ տեսանելի լիներ տվյալ սարքավորումը և ակնհայտ դառնար դրա անհապատասխանությունը: Սայան այս փուլում, երբ սարքերը առկա չեն, գտնում ենք, որ անհամապատասխանայության վերաբերյալ արված եզրահանգումը վաղ է:

Ինչ վերաբերվում է Հավելված 1.2-ի 17-րդ և 18-րդ տողերի վերաբերյալ արված դիտողությանը, ապա բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ վերոհիշյալ տողերի տեխնիկական շփոթման արդյունք է, դրանք տեղերով շփոթվե են:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Էդուարդ-շին» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»

Ի լրումն վերը նշված դիրքորոշման Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Էդուարդ-շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2022/43 ընթացակարգը:

Վերոհիշյալ ընթացակարգի հիմքերի վերաբերյալ 17.01.2022թ. ներկայացվել է դիրքորոշում: Ի լրումն վերոհիշյալ դիրքորոշմանը և ի հավաստումն թիվ ՍՑ-ՆԳ-2022/43 ընթացակարգով 18.02.2022թ. անվկացված նիստի քննարկման ընթացքում «Էդուարդ-շին» ՍՊԸ-ի կողմից հայնած փաստերի, լրացուցիչ հայտնում ենք հետևյալը.

Ինչպես արդեն հայտնել էինք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն արձանագրվել է, որ «Էդուարդ-շին» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ծավալաթերթը և առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, այսինքն ներկայացնել առաջարկվող սարքավորումների ծավալաթերթը:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ «Էդուարդ-շին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել են ոչ ամբողջությամբ, մասնավորապես՝ Հավելված N 1.2-ի մասով գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են թերություններ ներկայացված սարքավորումների մասին (այդ մասին մանրամասն ներկայացվել է նախորդ դիրքորոշմամբ):

Բողոքներ քննող անձին խնդրում ենք այս հարցը քննելիս՝ հաշվի առնել մեկ կարևոր հանգամանք:

«Էդուարդ-շին» ՍՊԸ-ում որպես հայտերի տեխնիկական մասերով պատասխանատու (ծավալաթերթ-նախահաշիվ, սարքավորումների մասով ծավալաթերթ և այլն) պատասխանատու է հանդիսացել ՍՊԸ-ի աշխատակից՝ Ռուբեն Բուլբուլյանը: Սակայն վերջինիս մոտ 13.01.2022թ. հայտնաբերվել է Covid-2019 կորոնավիրուս վարակը՝ ծանր վիճակով ընթացող (համապատասխան բժշկական փաստաթուղթը կցվում է), որի պատճառով Ռուբեն Բուլբուլյանը չի կարողացել ներկայանալ աշխատանքի և զբաղվել իր աշխատանքային պարտականություններով:

Արդյունքում Հավելված 1.2 լրացվել է ոչ տվյալ ոլորտի համար պատասխանատու հանդիսացող անձի կողմից, որը չուներ համապատասխան մասնագիտական գիտելիքներ այդ սարքավորումների ցանկը լրացնելու համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Կարգի 41-րդ կետի պահանջները՝ ՍՊԸ-ն որոշել է կատարել վերոհիշյալ շտկումը:

Հարգելի պարոն Ներսիսյան, խնդրում ենք հաշվի առնել այս փաստարկը և ՍՊԸ-ում ստեղծված ֆորս-մաժորային իրավիճակը և «Էդուարդ-շին» ՍՊԸ-ին չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 11.02.2022թ. ժամը 09:25-ին և 18.02.2022թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 18.02.2022թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոնշված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.01.2022թ. թիվ 02/16.4/575-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի նոյեմբերի 19-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10 ծածկագրով Երևան քաղաքի «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի շենքի (Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցներ) կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Էդուարդ-շին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերության տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am)

հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/43 ընթացակարգի շրջանակներում 11.02.2022թ. ժամը 09:25-ին և 18.02.2022թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/43 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/43 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի Հավելված 1.2-ով՝ սարքերի և սարքավորումների նկարագրով սահմանվել է հետևյալը.

N	Նախագծանախա-հաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ	Չ/Մ	Քանակ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում			
					Մասնակցի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	Մոդել /առկայության պարագայում/	Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիր

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Էդուարդ-շին» ՍՊԸ-ն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

Ծավալաթերթի մասով

ա) Մասնակցի կողմից չի ներկայացվել ծավալաթերթ:

Հավելված N 1.2-ի մասով.

ա) Մասնակցի կողմից չի ներկայացվել սարքերի և սաքրաքվորումների վերաբերյալ Հավելված N 1.2-ը:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝

մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (18.01.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 17.01.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանությունները «Էդուարդ-շին» ՍՊԸ-ի կողմից շտկվել են ոչ ամբողջությամբ, մասնավորապես՝ Հավելված N 1.2-ի մասով՝

18-րդ տողով ջեռուցման կաթսայի փոխարեն ներկայացվել է տեսախցիկի արտադրող, մոդել և տեխնիկական բնութագիր, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին,

2-4-րդ տողերով ներկայացված մոդելների տեխնիկական բնութագրով չեն համապատասխանում հրավերի պահանջներին,

5-րդ, 19-20-րդ տողով մոդելները նշված չեն,

17-րդ տողով ներկայացված չեն արտադրողը, մոդելը և տեխնիկական բնութագիրը և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2022թ. թիվ 26/26-1/1710-2022 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 24.01.2022թ. թիվ 02/16.4/575-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Ընկերության ներկայացուցչի կողմից նիստի ընթացքում հայտնած դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի,

գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և ***գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում***

արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.10-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները:***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝

հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով ստուգել մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը: Սույն պարբերության կիրառման դեպքում կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը պետք է առնվազն պարունակի տվյալներ մասնակցի (մասնակիցների) անվանման, հարկ վճարողի հաշվառման համարի և հայտը ներկայացվելու ամիս ամսաթվի և տարեթվի մասին:Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Այսպես, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի Հավելված 1.2-ով՝ սարքերի և սարքավորումների նկարագրով սահմանվել է հետևյալը.

N	Նախագծանախա-հաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ	Չ/Մ	Քանակ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում			
					Մասնակցի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	***Մոդել /առկայության պարագայում*** /	Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիր

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Էդուարդ-շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

Ծավալաթերթի մասով

ա) Մասնակցի կողմից չի ներկայացվել ծավալաթերթ:

Հավելված N 1.2-ի մասով.

ա) Մասնակցի կողմից չի ներկայացվել սարքերի և սաքրաքվորումների վերաբերյալ Հավելված N 1.2-ը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (18.01.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 17.01.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանությունները «Էդուարդ-շին» ՍՊԸ-ի կողմից շտկվել են ոչ ամբողջությամբ, մասնավորապես՝ Հավելված N 1.2-ի մասով՝

18-րդ տողով ջեռուցման կաթսայի փոխարեն ներկայացվել է տեսախցիկի արտադրող, մոդել և տեխնիկական բնութագիր, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին,

2-4-րդ տողերով ներկայացված մոդելների տեխնիկական բնութագրով չեն համապատասխանում հրավերի պահանջներին,

5-րդ, 19-20-րդ տողով մոդելները նշված չեն,

17-րդ տողով ներկայացված չեն արտադրողը, մոդելը և տեխնիկական բնութագիրը և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Բողոքներ քննող անձին խնդրում ենք այս հարցը քննելիս՝ հաշվի առնել մեկ կարևոր հանգամանք:

«Էդուարդ-շին» ՍՊԸ-ում որպես հայտերի տեխնիկական մասերով պատասխանատու (ծավալաթերթ-նախահաշիվ, սարքավորումների մասով ծավալաթերթ և այլն) պատասխանատու է հանդիսացել ՍՊԸ-ի աշխատակից՝ Ռուբեն Բուլբուլյանը: Սակայն վերջինիս մոտ 13.01.2022թ. հայտնաբերվել է Covid-2019 կորոնավիրուս վարակը՝ ծանր վիճակով ընթացող (համապատասխան բժշկական փաստաթուղթը կցվում է), որի պատճառով Ռուբեն Բուլբուլյանը չի կարողացել ներկայանալ աշխատանքի և զբաղվել իր աշխատանքային պարտականություններով:

Արդյունքում Հավելված 1.2 լրացվել է ոչ տվյալ ոլորտի համար պատասխանատու հանդիսացող անձի կողմից, որը չուներ համապատասխան մասնագիտական գիտելիքներ այդ սարքավորումների ցանկը լրացնելու համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Կարգի 41-րդ կետի պահանջները՝ ՍՊԸ-ն որոշել է կատարել վերոհիշյալ շտկումը»:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընկերության կողմից, որպես վկայակոչվածի ապացույց ներկայացված փաստաթղթերը, գտնում եմ, որ տվյալ դեպքում Ընկերության դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, քանի որ Ընկերության աշխատակցի մոտ, ով աշխատանքի ընդունելու մասին 07.09.2020թ. հրամանի համաձայն՝ հանդիսանում է որպես հայտերի կազմման տեխնիկական մասերով պատասխանատու, 13.01.2022թ. կատարված հետազոտության արդյունքում հայտնաբերվել է Covid-2019 կորոնավիրուսային վարակ, որի հետևանքով Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված է եղել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 17.01.2022թ. արձանագրված անհապատասխանությունը պատշաճ կերպով շտկելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2022թ. թիվ 26/26-1/1710-2022 գրությամբ «Էդուարդ-շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**